



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՉԱԽՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ


Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻՒ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր ազդ.	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — «Եթէ եկեղեցին իյնայ,	ԳՐԻԳՈՐԻՍ
ազգը չի կրնար ապրիլ»:	
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, Առաջիկայ ընտրութեան	ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ
առթիւ (Բ.)	ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
Ո՞վ պէտք է ընտրել Կաթողիկոս	ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԺԲ. ՄԱՐԳԱՐԷԻՅ. — Ամովս (Բ.)	ԽԱՀԱՏՈՒՐ ՔԶ. ՊՕԶԻԿԵԱՆ
«Կը սիրեմ կուսակցութիւնները»	ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ
ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԵԼԻՈՍ. — Առաջին Բրիտոնեա-	
նէրու ժամանակուան պատմութիւն (Շար.)	
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր	



«ՏԱԺԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշկէպաշ, Հայոց եկեղեցի:

بشکطاش ارمنى کليسا سنده «داجار» غزته سى مديرى پاپاس زارماير افندي
Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”-ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրոժ
Արսասահմանի համար	» 10 Ֆրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆԻՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՅԻՕՆ ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ՁՄԻԻՌՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻԻՄԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բհնյ. Պրպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. — ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլուեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաչեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուսմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմեսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բհնյ. Թիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պաակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷՁՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 31

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Թուրքիոյ եւ Արտասահմանի մեր Պատ. գործակալներէն ստիպմամբ կը խնդրենք ի նկատ առնել թէ տարւոյն ութերորդ ամիսն է, եւ հետեւապէս անհրաժեշտաբար պէտք է փակեն մեզի հետ ունեցած իրենց հաշիւը: Ատոնց մէջ ոմանք ոչ միայն չեն փակած այդ հաշիւը. այլեւ կան որ տակաւին ո եւ է վճարում չեն ըրած ներկայ Բ. շրջանի բաժանորդագրութեանց համար, եւ անցեալ շրջանէն ալ հաշիւ ունին դեռ: Մենք ջանացած ենք եւրոպական ճշգրտակցութիւն դնել թերթին առաքմանց մէջ, եւ գիտենք նոյնն ընել հաշուական խնդրոյն մէջ ալ, բաժանորդագրութեանց կանխիկ ըլլալու պայմանը գործադրելով անխափր, եւ բաժնեգրիներու առաքումը յապաղեցնողներու թերթերը դադրեցնելով: Ատիկա չենք ուզած ընել ի նկատ առնելով որ այս թերթը շահագիտական ձեռնարկ մը չէ, եւ կարելի գիւրու թիւները տալով Պատ. բաժանորդաց, որոնց մէջ ստուար թիւ մը կը կա-

մեն մեր քահանայ եղբայրները: Հետեւապէս նոյն ազնուութիւնը կը սպասենք իրենցմէ, եւ կը յուսանք որ անյապաղ կը հատուցանեն իրենց պարտքը:

Թերթիս խմբագիր-տնօրէնը, որ գործին յաջողութեան սիրոյն յանձն առած է խմբագրական եւ վարչական կրկին հոգերը, իրաւունք ունի Պատ. բաժանորդներէն սպասելու որ հարկադրուած չըլլայ տարին տամերկու ամիս դրամի խնդրանքներով զբաղելու եւ սպառելու իր ժամանակը, զոր լաւագոյն կերպով պիտի կրնար գործածել, առաւելապէս թերթին խմբագրական ճիւղին նուիրելով ինքզինքը:

Հաճոյքն ունինք ծանուցանելու թէ Գատըգիւղի բարեխրատ քարոզիչ՝ Գրեկոյ Մ. Վ. Գալիմֆեարեան խոստացած է պարբերաբար աշխատակցիլ թերթիս: Յառաջիկայ շաբթու կը սկսինք հրատարակել իր հմտալից մէկ ուսումնաւորութիւնը:

ՍԻՆԵՍՏ ԳՊՐՈՑԻՆ վրայ:

ՀՈԳՅԻՈՐ ԿԵԱՆՐ

«ԵՅԷ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՅՆԱՅ

ԱԶԳԸ ԶԿՐՆԱՐ ԱՊՐԻԼ»

(Շողակամ Սր. Էջմիածնայ Տօնին առ իմով) (*)

Ամերիկայի ազգեցիկ ու հանրաժանօթ երէցներէն մէկը հետեւեալ տողերով կը պատկերացնէ Քրիստոնէութեան ու Քրիստոսի Եկեղեցիին դերը Ամերիկեան առողջ ու մեծափառ ազգին բարգաւաճումին մէջ:

«Իւրին է ըսել թէ այն միլիոնաւոր օտարականները, որոնք խաղաղաբար կ'ողողեն մեր երկրին սահմանները, Ամերիկեան հարստութիւնէն ու բարգաւաճումէն չլացած կուզան մեղի: Բայց ի՞նչ բան է ան որ այս երկիրը այսչափ բարգաւաճ ըրած է: Զայդ միայն անոր հարստութեան Փիզիքական աղբիւրներուն մէջ չենք կըրնար գտնել, որովհետեւ կան ուրիշ երկիրներ, որոնք աւելի արգասաբեր ու արծէքաւոր հող ունին, ինչպէս նաեւ կոյս անտառներ ու հանքեր, բայց նորէն հոն չատ ցանցառ է բնակչութիւնը, եւ եթէ բազմամարդ ըլլան իսկ՝ չատ բարգաւաճած չեն: Զայդ չենք կրնար գտնել միայն մեր նախահայրերուն անկախ ու ձեռներէց ոգիին մէջ ալ, որովհետեւ ուրիշ նուազ բարգաւաճ ու ծաղկեալ երկիրներ կան, որոնց բնակչութեան ծագումը աւելի ճարպիկ ու զօրաւոր նախահայրերէ եղած է: Ամերիկեան բարօրութեան ու բարգաւաճումին գաղտնիքը պէտք է փնտռել մեր հայրերուն՝ Ամենակարող Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան մէջ: Գերօթեան տունէն ելլող Իսրայէլացիներուն

(*) Ինչպէս գիտենք, Շողակամը յիշատակութիւնն է այն տեսիլքին, ուր Ս. Գր. Լուսաւորիչ տեսաւ՝ երկինքէն ցլացող, կամկոթ լոյսերու և շողերու մէջ՝ Միածինը որ կ'իջնէր ապաղայ Մայր Տաճարին, Հայ Կաթողիկէին տեղը, և ձեռքի ուռով կը սարսեցնէր Սանդարմետը, հին հաւատքին հիմերը: Հայ Եկեղեցւոյ Շարականը ներշնչուած շեշտերով կ'երգէ հրճուանօք: — «Լուսաւորեալ, լուսաւորեալ Կաթողիկէ Եկեղեցի՛, քանզի ի լեզ լեզ աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց եւ լուսաւորեաց զմանկունս Ին:»

Ս. ԽՄԲ.

պէս Եհովան զանոնք ալ առաջնորդեց, և անոնք երբ մեր ազգային կեանքին հիմերը կը դնէին՝ Յետո՛ւ պէս ըսին, «Մենք Տիրոջ պիտի ծառայենք»:

«Թէեւ մերը, բժախնդրօրէն խօսելով, Քրիստոնեայ ազգ մը չէ, բայց նորէն Աստուծոյ զգացումը այնչափ զօրաւոր է մեր ազգին մէջ, որ բարոյական չարիքներ ուշ կամ կանուխ յարձակում կը կրեն ու կը պարտուին: Միևնոյն ատեն ուրիշ ազգեր ալ յարգական տեղ մը տուած են մեզի՝ տիեզերական եղբայրութեան ու արդարութեան առաջնորդութիւն ընելու մէջ: Մեր օրէնքներն ու հաստատութիւնները քննող եւ ուսումնասիրող որ եւ է խոհուն ու անկողմնակալ անձ պիտի ստիպուի այս համոզումը գոյացնել: Ինչպէս մեր Երկրին Հայրն ալ յայտարարեց ու պնդեց, զաշխարհ առանց Աստուծոյ կառավարել անկարելի է: Կամ ինչպէս մեր Սահմանադրութեան հիմնադրները գրեցին, Կրօնքը պէտք է որ ըլլայ. երբ այդ յօդակապը խզուի, մարդկային ընկերութիւնը կ'անդամատուի ու անդամները կը կորսուին: Հետեւաբար Ամերիկա եկող օտարականը հարեւրապետին պէս թող կարենայ շուտով հասկնալ գաղտնիքը: Անոնք միշտ վարժ են տեսակ մը կրօնքի, եւ գիտակից են իրենց Աստուծոյ համար ունեցած պատգին: Ու թէեւ անոնք յաճախ իրենց մանկութեան Եկեղեցիին հետ իրենց յարաբերութիւնը ընդհատած կ'ըլլան, բայց նորէն անոնք հոգեւոր մշակումի համար յարմար գետին մը կը հանդիսանան: Խնդիր չէ թէ այդ դուրսէն եկող օտարականներէն կրօնապէս յոյս կա՞յ, այլ բուն կարեւոր խնդիրը սա է թէ Ամերիկայի Քրիստոնեայ Եկեղեցիները կ'ուզեն անոնց վկայութիւն տալ կրօնքի համար, եւ կը ջանաւն աւետարանել անոնց: Ամերիկայի Քրիստոնեայ Եկեղեցիներուն ապագան այս ճշմարտութիւնէն կախեալ է, եւ եթե Եկեղեցին իյնայ ազգը չի կրնար ապրիլ: Հարազատ ու ազնիւ հայրենասիրութեան մը պէտք ունինք, եւ զայդ կրօնքէն զատ ոչ մէկ բան կրնայ ներշնչել մեզի:»

* * *

Վերի տողերը այնչափ պերճախօս են որ անոնց վրայ բառ մը խփ աւելցնելու պէտք չկայ: Բայց երբ նահատակեալ Հայ ազգին պատմական ու պատուական Եկեղեցիին վրայ կը խորհիմ օրուան այս նեղ-չնչող աօնին առիթով, ախուր մտածումներ կը պաշարեն միտքս: Իբրեւ իր Ազգն ու Եկեղեցին սիրող Հայ մը, չեմ կրնար չտխրել, երբ կը տեսնեմ մեր Մօր, Սբ. Եկեղեցիին, ողբալի վիճակը:

Բայ՛, Հայ կղեր, միայն ծիսակատարութիւն, մկրտել, պսակել, թաղել է քու պարտականութիւնդ: Ինչո՞ւ քու սիրտիդ եւ քու բազմաշարժար հօտիդ սիրտերուն մէջ չեն իրականանար Աւետարանին վսեմ ճշմարտութիւնները: Այդ փառաւոր կամ անշուք նիւթական Եկեղեցին բանալ ու գոցել է միայն քու պարտականութիւնդ. անմահ հոգիներու հետ չէ՞ քու գործդ: Բայց ինչո՞ւ այս ամայութիւնը Հայ տաճարներուն մէջ, ինչո՞ւ այս լուսահատութիւնը յոգնաբեկ հոգիներու մէջ, եթէ չես հաւատար կոչումիդ ու գործիդ, գոնէ բարոյական քաջութիւնը ունեցիր մէկդի քաշուելու. թերեւս Աստուած գթայ այս խեղճ ազգին, ու նոր Լուսաւորիչներ, Սահակներ Մկրտիկներ ու Ներսէսներ յարուցանէ:

Հայ կղեր, կը կարծե՞ս որ ժողովուրդիդ սիրտին միայն խօսելով, զգացումները միայն հրահրելով պիտի կրնաս պայծառ պահել քու Եկեղեցիդ: Չէ՛, ա՛լ ժամանակը եկած է որ կրօնքին վսեմ ճշմարտութիւնով ու Աւետարանին բարձր սկզբունքներով անոնց միտքերուն ալ խօսիս, որովհետեւ մեր հայրենի հովերէն տարբեր հովեր սկսած են փչել մեր նոր սերունդին սրտերուն վրայ: Իր կոչումին դիտակից ու Եկեղեցիին նուիրուած կղերն է, զարգացած ու լուսամիտ հոգեւորականութիւնն է որ պիտի կրնայ փրկել իր Եկեղեցին ու Ազգը:

Հայ կղեր, ժամ է որ ինքզինքիդ դաս, կազմակերպութիւն, գործի սկսիս, որովհետեւ Եկեղեցիիդ բարեկարգութեան, պայծառութեան համար ծանր պարտականութիւններ կը ճնշեն ուսերուդ: Գիտե՞ս թէ հոգեւոր կեանքը մեռնելու վրայ է դա-

ւալներուդ հոգիին մէջ, եւ մոռնալու ալ չես թէ առանց հոգեւոր կեանքի բարգաւաճումին, կանգուն չի կրնար մնալ Եկեղեցիդ՝ որչափ ալ պատմական ըլլայ ան ու պատուական:

Հայ կղեր, եթէ քու եւ ժողովուրդիդ փրկութեան համար գործել կ'ուզես, պէտք է արթննաս. որովհետեւ աշխարհաքաղաքացեական հովեր ազգային կապերուն կը սպառնան, ընկերական չմարտաւած, չփորձուած, եւ աւելի լուսաւորեալ (?) կեդրոններու մէջ չյաջողած նոր վարդապետութիւններ Հայ ընտանիքին աւանդական ու պարզ կեանքին ու սրբութեան կը սպառնան, եւ ժիտական դիտութեան, ուրանալով դիպնալու չգիտական հովեր մըն ալ երեւելիներու եւ աներևոյթներու դէմ կը մաքառին: Հետեւաբար կոչումիդ արթնցիր, Հայ կղեր:

Հայ ժողովուրդ, դուն ալ պատասխանատուութեան բաժին ու պարտականութեան բեռ ունիս որոնցմէ փախչիլ պատիւ չի բերեր քեզի: Հայ Եկեղեցին Հայ կղերը չէ, այլ Հայ ժողովուրդը: Կղերը Եկեղեցիին պաշտօնեան է, քեզ հովուելու կոչումը ունեցող: Ժամ է որ աէր դասնաս քու Եկեղեցիիդ, քու նուիրական ու դարաւոր ժառանգութեանդ, կամ ուրիշ խօսքով, աէր ըլլաս ինքզինքիդ, որովհետեւ ինչպէս ըսի՝ Եկեղեցին դուն ես: Դարերու արեան ծովին վրայէն քեզ մինչեւ այս լուսաւորեալ դարուն նաւահանդիսար բերողը, քեզ Աւետարանին լոյսովը լուսաւորողը, քու ընտանեկան սրբութիւնդ անվթար պահողը այս Եկեղեցին եղած է: Ասոր համար պէտք է սիրես քու Եկեղեցիդ. աշխատիս բերել դայն այնպիսի վիճակի մը, որ որչափ քու սիրտիդ՝ այնչափ ալ միտքիդ ու հոգիիդ խօսի:


Հայ ժողովուրդ, արթնցիր նաեւ քու հոգեւոր պարտականութիւններուդ վրայ, հաւատքի կեանքը ասլրէ, որովհետեւ նախապայրուդ բոլոր մեծագործութիւններն ու քեզի պարծանք եղող յիշատակները ճշմարտութեան հաւատքին պտուղներն են: Եւ արդէն իբրեւ ցեղ դարաւոր կոչումդ եղած է ճշմարտութեան հակառա-

կորդներուն դէմ վկայել անոր համար, վեր բռնել լոյսի ու ազատութեան դրօշը: Առանց հոգեւոր կիսնքիւ առողջութեան պիտի խնաս կոչումիդ բարձրութենէն, Հայ ժողովուրդ:

Եւ դուն, ո՛վ Հայ երիտասարդութիւն, դուն ապագան Հայ Եկեղեցիին ու ազգութեան, այս նուիրական տօնին առիթով ինչ կը խորհիւ արդեօք քու Եկեղեցիդ մասին: Դարերէ ի վեր քու նախահայրերդ պանոզ ու բարձրացնող կրօնքն քու Եկեղեցին կը կարծես որ այսօր ապրիլու իրաւունքը կորսնցուցած է: Կը կարծես որ Եկեղեցին ու կրօնքը իբր պատմական յիշատակ մը, միայն իբր ազգային միութեան կապ մը յարգելով ու նկատելով պէտք եղածին պէս օգտուած կ'ըլլաս անոնցմէ: Անոնք քու հոգիիդ, սիրտիդ, միտքիդ, կեանքիդ հետ գործ չ'ընին: Դուք, ով ազատամիտի հովիւր առնող երիտասարդ ազգակիցներս, պահ մը աչքերնիդ վերցուցէք տեսնելու համար օրինակը մեծ աղգերու, որոնց համար կրօնքը աւելորդապաշտութիւն ու կեղծիք չէ դեռ: Արդեօք ձեր շնորհիւ Հայը միայն պիտի ըլլայ այն արդիական ու գիտակից (?) ազգը որ ամէն հնութիւն, անցեալ, պատմութիւն, Եկեղեցի, կրօնք մէկդի պիտի նետէ, ու նոր ազատագրութեան մը պիտի զիմագրուէ: Քանզի քաջութիւն չէ՝ այլ շինելը, տապալող ամէն հարուած բարեկարգութիւն չի բերեր: Ծշմարիտ բարեկարգութիւնը, գիտակցութիւնով, ճշմարիտ ազգասիրութիւնով կ'ըլլայ: Եթէ կը փափաքինք փրկել մեր Ազգն ու Եկեղեցին, հետեւինք օրինակին մեր սուրբ Հօր որ կ'ըսէր.

«Եկայք, շինեցուք սուրբ զխորանն յուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ յոյս ի Հայաստան աշխարհի:»

ԳՐԻԳՈՐԻՍ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՌԱՋԻՆԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ)

Բ. (1)

1911 Դեկ. 11ի ընտրութեան գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ, ըսած էի, ընտրել կաթողիկոս մը որ Ռուսահայոց այժմեայ տխուր վիճակին դարման տանելու կարող ըլլայ, եւ մասնաւանդ հոգեւոր հեղինակութենէ մը աւելի աշխարհիկ գործոց վարչութեան մէջ ճարտարութիւն ունենայ:

Ընտրեալ առաջիկայ կաթողիկոսը ընտելեմ կարծեր որ աստուածաբանական բարդ խնդիրներ լուծելու առիթ ունենայ, մինչ իր ընտրուած օրէն սկսեալ Ռուս պետութեան հետ պիտի սկսի բանակցութեանց, որոնք ճակատագրական ազգեցութիւն կրնան ունենալ Ռուսահայոց ապագային վրայ: Նոր կաթողիկոսը, ներկայացած զբոլորութեանը յաղթելու համար, օժտուած պէտք է ըլլայ արտասովոր կորովով, եւ ցոյց տայ կամք, յարատեւութիւն ու մասնաւանդ ուղղամտութիւն:

Այս յատկութիւններով օժտուած կաթողիկոս մը կրնայ անվիհեր քաջասրտութեամբ մը շարունակել Իգմիրլեանի օրով սկսուած բանակցութիւնները, եւ ստեղծել նպատաւոր պայմաններ՝ մեր Ռուսահայ հաղաթիւներուն համար:

Կատարուելիք գործը սակայն շատ փափուկ է, եւ յետադիմական տրամադրութիւններով օժտուած մի ու եւ է կաթողիկոս կրնայ մեծապէս վնասել ամբողջ գործին, եւ կացութեան բարոքում մը առաջ բերելու տեղ աւելի դժբախտ դրութիւն մը ստեղծել:

Հիմա Ռուսիոյ մէջ Հայ Եկեղեցին իրապէս ճգնաժամ մը կ'անցընէ, զի օրէնքին մեկնաբանութեան համար կառավարութեան եւ ազգին մէջ տարակարծիքութիւն մը առաջ եկած է, եւ այսօր Հայ Եկեղեցւոյ վարչական եւ դպրոցական մաս-

(1) Ա. յօդուածը տես 28րդ. Թիւը:

տակարարութեան գործերու մէջ կը տիրէ անորոշութիւն մը եւ խառնակութիւն մը, որ պէտք է ժամ առ ժամ վերջ գտնէ Հայ Եկեղեցւոյ ոգւոյն եւ արդի պահանջմանց համաձայն:

Այդէն ծանօթ է թէ Հայ Եկեղեցւոյ եւ կաթողիկոսական աթոռին Ռուս պետութեան հետ յարաբերութեանց համար Ռուս պետութենէն սահմանուած օրէնք մը դուրսիւն ունի: Այդ օրէնքը, Պաշտօնիւս, իսկապէս հիմնական օրէնք մըն է, եւ իրեն յարակից ունի Կովկասի փոխարքաներուն ինչ ինչ հրահանգները, իբր Պաշտօնիւսի յօդուածներու գործադրութեան օրէնք:

Այսպէս, Պաշտօնիւսի կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ յօդուածներուն իբր յարակից՝ 1843 Ապրիլ 9ին 33 յօդուածներէ բաղկացեալ օրէնք մը դրուած է, որ 1865ին ինչ ինչ բարեփոխութեանց ենթարկուած է: 1908ին դարձեալ այդ հրահանգը կրնայ սրբագրութիւն մը:

Նոյնպէս հոգեւոր դպրոցներու մասին 1878ին, 1884ին, 1903ին եւ 1905ին հրատարակուած են զանազան հրահանգներ, ամէնքն ալ իբր թէ հիմնուած Պաշտօնիւսի տրամադրութեանց վրայ, սակայն ոգւով եւ տրամադրութեամբ շատ տոնգամ իրարմէ խիստ հեռու:

Միայն դպրոցական օրէնքներուն իրարմէ ունեցած տարբերութիւնները նկատի առնելով, պիտի տեսնուի թէ Պաշտօնիւսն իբր հիմնական օրէնք ո՛րքան տրամադիր է առարկայ ըլլալու լայն մեկնութեանց կամ սեղմիչ տրամադրութեանց:

Հիմնական օրէնքները արդէն շատ անգամ տիրող տրամադրութեանց համաձայն առաձգական հանդամանքով մը կը ներկայանան: Այդ հանդամանքէն զերծ չէ նաեւ Պաշտօնիւսն: Այսպէս, չօշափելի օրինակ մը տալու համար, ըսեմ թէ 1836էն մինչեւ 1905, Պաշտօնիւսի՝ առաջնորդներու ընտրութեան տրամադրութիւնը տառական կերպով մեկնուելով կաթողիկոսը անձնապէս կը ներկայացնէր երկու ընտրելիներ, որոնցմէ մէկը կը վաւերացուէր կառավարութենէն:

1905ին՝ Ռուս Սահմանադրութենէն յետոյ՝ Ռուսահայք տիրող տրամադրութենէն օգտուելով օրէնքը տարբեր կերպով մեկնեցին: —

Նկատելով թէ Պաշտօնիւսի բազմաթիւ յօդուածներուն մէջ Հայ Եկեղեցւոյ կարգ ու կանոնին համաձայն վարուելու տրամադրութիւններ կան, նկատելով թէ Հայ Եկեղեցւոյ կարգ ու կանոնին, ինչպէս նաեւ ծիսակատարութեան մէջ եկեղեցականաց ընտրութիւնը ժողովրդեան իրաւունքն է, եւ վերջապէս նկատելով թէ Պաշտօնիւսն արդէն ինքն ալ նուիրագործած է այդ կանոնական եւ պարտաւորիչ սովորութիւնը քահանայական եւ կաթողիկոսական ընտրութեանց՝ այսինքն ամէնէն վար եւ ամէնէն վեր աստիճաններուն համար, որով միջին աստիճանները անխուսափելիօրէն ընտրութեան մը ենթակայ պէտք է ինչ ըլլալ, թեւադրեցին իրենցան կաթողիկոսը որ Առաջնորդները ընտրելու իրաւունքը թեմերուն վերադարձնէ: Իրեմեան կոնդակով մը տուաւ այդ իրաւունքը, եւ այդ հիման վրայ քանի մը թեմերու համար ընտրուեցան առաջնորդներ:

Դիտելի է որ Ռուս կառավարութիւնը շատ շահադրողութեամբ պէտք ալ չունէր թէ կաթողիկոսին կողմէ իրեն վաւերացման ներկայացած երկու կանխիտները ուղղակի կաթողիկոսին թէ ժողովրդին ընտրածներն էին: Օրէնքը առաւապէս կը գործադրուէր իրականութեան մէջ, եւ թեմականներու ընտրութիւնը բաղձանք մըն էր որ աւելի ներքին նշանակութիւն մը ունէր. թեմականներու եւ կաթողիկոսին կամքէն կախուած:

Որչափ ասին որ յետաշրջական տրամադրութիւնները չէին մտած կառավարութեան մէջ, իրաւամբ ալ այսպէս պատահեցաւ: Սակայն երբ ռեալիստներ յաղթական հանգիստացաւ, կառավարութիւնը միջամտեց: Իզմիրլեան ընդարձակ պատասխանագրով մը պաշտպանեց այս դրութեան առաւելութիւնները, եւ Կովկասի փոխարքային անձնական հաւանութիւնը գէթ կրցաւ ձեռք բերել. եւ հաւանական էր որ եթէ ապրէր՝ յաջողէր կառավարու-

թեան ալ նուիրագործել ապա թեմական խորհուրդներու եւ ժողովներու դոյու-
թիւնը եւ Առաջնորդներու ընտրական սկզբունքը՝ Ասոր նման ուրիշ տրամա-
դրութեանց մասին ալ կրնան իրարմէ շատ տարբեր մեկնութիւններ տրուիլ Պաշա-
ժեկնիային, որ թէեւ միշտ ազգին դժգոհու-
թեանց առարկայ եղած օրէնք մը, կրնայ այսօր իւր նուազագոյն չարիք մը ընդուն-
ուիլ Պաշաժեկնիան խմբագրուած է, ինչպէս ժամօթ է, առանց ազգին հաւանութեան,
ուղղակի Ռուս կառավարութեան նախա-
ձեռնութեամբ, եւ Հայոց Կաթողիկոսնե-
րու կամքին հակառակ՝ գործադրուած է,
առաջին տարիներու մէջ մեղմիւ եւ ոչ
առական կերպով, եւ հետզհետէ առաւ-
կանապէս եւ խառն:

Մասնաւորապէս Թրքահայք 1866ին եւ
1895ին բուռն բողոքներ ըրած են Պաշա-
ժեկնիայի դէմ, սակայն ո եւ է ազդեցու-
թիւն չեն ունեցած այդ բողոքները, զի
ուս կառավարութեան քաղաքականու-
թիւնը 1836էն սկսեալ անխտոր ուղղու-
թեամբ եւ առանց ծրագրային փոփոխու-
թեան շարունակուած է:

Այսօր միտքերու մէջ մեծ յեղաշրջում
մը մտած է, եւ Թրքահայք ալ համոզում
գոյացուցած են թէ Ռուսահայոց համար
Պաշաժեկնիայի պահպանութիւնը՝ լուսամիտ
մեկնութեամբ մը՝ լաւագոյն գրաւարները
կրնայ համարուիլ անոնց կացութեան բար-
ւորման, եւ վստայը Պաշաժեկնիայի փո-
փոխութեան մէջն է:

Իզմիրլեանի ընտրութիւնէն անմիջապէս
առաջ Ռուսահայք ենթարկուեցան այդ
վանդին, Ներքին գործոյ նախարարու-
թեան մէկ տեղեկագրութեան վրայ, որ
1836ին օրէնքը հինցած համարելով՝ Աթո-
ռէն դատարկութիւնը յարմար առիթ մը
կը նկատէր նոր օրէնքի մը խմբագրու-
թեան, որուն նպատակը պիտի ըլլար
կաթողիկոսին համար ստեղծել այն-
պիսի կացութիւն մը, որ իբր սոսկ Ռուս
կառավարութեան պաշտօնատար՝ ենթա-
կայ ըլլար Ռուս կառավարութեան անմի-
ջական հրամաններուն, եւ իր պաշտօնա-
նութիւնը եւ դատապանի ենթարկուիլը

օրինակ միւսնար, մինչդեռ Պաշաժեկնիան
մշնչեւ հիմա այդ իրաւունքը չի տար,
կաթողիկոսին տալով ընդհանրական հան-
գումանք մը՝ իբր պեա նաեւ ոչ-ուսահը-
պսոսի Հայերու Այս վիճակը իբր թէ
շահագործած էր իրիմեան կաթողիկոս,
չգործադրելով կառուածներու գրուած
օրէնքը եւ կառավարական այլ հրահանգ-
ներ, եւ ոյարդապէս ընդդիմանալով կառա-
վարութեան՝ յենով իր ընդհանրական հան-
գումանքին վրայ:

Ռուս Նախարարաց Խորհուրդը նկատի
առնելով Ներքին Գործոց նախարարին այս
տեղեկագիրը, եւ լսելով նաեւ Կովկասի
փոխարքային տեղեկատուութիւնները՝
ինչպէս նաեւ Արտաքին Գործոց նախա-
րարին տեսութիւնները՝ մասնաւորապէս
Կ. Պոլսոյ Ռուս դեսպան Պ. Չարիքովի
զեկողութեանց վրայ հիմնուած, 1908
Օգոստոս 26ին ընդարձակ տեղեկագիր մը
մատուցած է Ներքին Չարին: Այդ տեղե-
կագրին եզրակացութեան վրայ, Ներքին
Գործոց նախարարին՝ կաթողիկոսին ընտ-
րութիւնէն առաջ նոր Պաշաժեկնիա մը
խմբագրելու առաջարկը մերժուած է, եւ
ընդունուած է անհրաժեշտութիւնը Հայե-
րու եւ Կաթողիկոսին համաձայնութեամբ
օրէնքին սրբագրութիւնը կատարելու:

Ասոր վրայ Բեդիւսպուրկի մէջ պահ-
ուած հրաւիրագիրները ցրուուած են, եւ
ասոր համար է որ նախորդ ընտրութեան
ատեն հրաւիրագիրները այնքան ուշ եկած
էին:

Այս անգամ հրաւիրագիրները կանուխ
իր ժամանակին զրկուած ըլլալէն դիւրին
է դուշակել թէ Ռուս կառավարութիւնը
1908 Օգոստոս 26ի տեղեկագրին եզրա-
կացութեան համաձայն շարժիլ որոշած է:

Ուրեմն նոր կաթողիկոսը յանուն ազ-
գին պիտի բանակցի Ռուս կառավարու-
թեան հետ, նոր Պաշաժեկնիայի մը խմբա-
գրութեան համար: Արդէն Պաշաժեկնիային
գործադրութեան համար Ռուս կառավա-
րութեան ինչ ինչ հրահանգները եւ իբր
թէ օրէնքը յիշեցնող հրամանները ցոյց
կուտան թէ Ռուս կառավարութիւնը ի՞նչ
հայեացքով պիտի կատարէ այդ վերաբեր-

նութիւնը, իրեն յարմար նկատած մէկ պահուն:

1828էն ծրագրուած ուղղութիւնն է որ կը շարունակուի, եւ Ռուս պետութիւնը աւելի քան երբեք իր սկզբունքներուն կառչած կը մնայ:

Պաշտօնէնայի խմբագրութեան համար անցեալ դարու երեսունական թուականներու Պատկերիչի հրահանգը կարգադրողները, եւ 1908ի Նախարարաց Խորհուրդի տեղեկագիրը ուսումնասիրողները պիտի տեսնեն թէ Ռուս կառավարութիւնը անխստօր իր ծրագիրը կը գործադրէ:

Այս երկու շահեկան վաւերացիրները ցոյց կուտան թէ Ռուս կառավարութիւնը՝

Ա. Առանց բարեկամ ըլլալու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Ընդհանրական հանգամանքին, կը պահպանէ անոր այդ պիտի՝ պարզապէս քաղաքական նկատումներով, եւ չհագործելու մտադրութեամբ:

Բ. Կ'ուզէ սահմանափակել կաթողիկոսին ուղղակի Ռուսահայոց վրայ ունեցած իրաւասութիւնները, եւ կ'ուզէ հակադէմ, սեղմումներու եւ ստորագրումներու ենթարկել անոր հեղինակութիւնը եւ իշխանութիւնը:

Էջմիածնայ Կաթողիկոսներու ընդհանրականութեան տրուած հարուածը որքան ալ ծանր կ'ընէ, ազգը այս կողմէ ամեն քան մեծ վրդուանքի մը չի կրնար մատնուիլ, զի ազգը կրնայ, ինչպէս անցեալին, նոյնպէս ներկային մէջ ընդհանրական կաթողիկոսին Սթոքը ալլուր փոխադրել: Սակայն խորապէս կը վրդովինք, եւ իրաւամբ, երբ Ռուսահայոց Հոգեւոր Պետին իրաւասութիւնները կը սահմանափակուին, եւ անով կը հարստանան Ռուսահայոց եկեղեցական, կրթական, ընտանեկան, ազգային գործերը:

Հետեւաբար ամենամեծ կարեւորութիւն ունի մեզի համար Հայոց Կաթողիկոսին դիրքը Ռուսիոյ մէջ, իբր Ռուսահայտակ Հայոց հոգեւոր պետ:

Յաջորդ յոգնածով պիտի ցոյց տանք թէ մինչեւ հիմա ի՞նչ էր Կաթողիկոսին իրաւասութիւնը, ի՞նչ սեղմումներու ենթարկուած է, ի՞նչ ընել կ'ուզէն առաջիկային, եւ թէ ինչ պէտք է ըլլայ նոր կաթողիկոսին ուղղութիւնը:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ

Ո՛Վ ՊԵՏԻ Է ԸՆՏՐԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Խմբագրութիւնս մասնաւոր նամակով մը Ցախուրին աշխատակցելու հրաւեր ուղղած էր մեծատաղանդ գրագէտ Պ. Արշակ Չօպանեանի, որ իր հիւանդութենէն տակաւին բոլորովին կազդուրուած ըլլալով, յայտարարած է թէ առ այժմ հագիւ իր ուժերը կը բաւեն ձեռքն եղած գործերուն եւ դեռ հանգիստի պէտք ունի: Հետեւապէս յաւաքիկային թողլով մեր հրաւերին գործնականապէս պատասխանելը, հետեւեալ ուշագրաւ տողերը կը գրէ Կաթողիկոսական ընտրելներու վրայ. —

Կը փափաքէի գրիլ կաթողիկոսական հարցին վրայ Տարօրինակ է որ թրքահայ մամուլը այդքան յիշ կը զբաղի այդ ամենակարեւոր հարցով, աւելի ճիշդ՝ բնաւ չ'զբաղիր: Տարօրինակ է նաեւ ու հաւաքի՝ որ Ազգ. Ժողովը կաթող. ընտրութեանց համար պատգամաւոր պիտի ընտրէ քանի մը օրէն, եւ դեռ Օրմանեան սրբազանի խնդիրը չէ լուծած. ասկէց աւելի incorrect եւ անարդար բան կարելի չէ երեսակայել: Օրմանեան սրբազան իր թերութիւններն ունի, ինչպէս ամենքս: Բայց անուրանալի է որ մեր ամենէն կարող եկեղեցականներէն մին է, եւ բնաւ չեմ կրնար ընդունիլ որ դաւաճան, ազգատեսաց ըլլայ, ինչպէս ըսողներ կան: (Ստենով ես ալ իրեն դէմ խիստ լեզուով զրած եմ՝ Տէր Ներսէսեանի գործակատարութեան միջոցին, բայց այժմ կը խոստովանիմ որ չպիտի գրէի նոյն ձեւով): Ազգին շահը կը պահանջէ որ օր առաջ հանեն այդ կարող գործիչը իր տան մէջ փակուած մնալու դատապարտուած վիճակէն: Հակառակ ասոր, իր զընով շարունակեց (եւ հոյակապօրէն) օգտակար ըլլալ ազգին, բայց կարող է այլապէս ալ օգտակար ըլլալ: Միայն թէ համաձայն չեմ որ Հայրապետ ընտրենք զինքը, որովհետեւ շատ ծեռ է. լաւագոյն է որ ըլլայ Պոլսոյ Թաղի մը քարոզիչ, ուսուցիչ մեծ դպրոցի մը մէջ, եւ զրական աշխատութիւնները շարունակէ: Միեւնոյն բանը կը մտածեմ նաեւ այն ոսկեղէն ուղեղին համար որ Եղիշէ Արք. Դուրեանն է, Կաթողիկոսութեան համար լաւագոյն ընտրե-

լին՝ ըստ իմ խոնարհ կարծեաց՝ կարապետ եպիսկ. Տէր-Մկրտիչեանն է, հմուտ, կուրովի, ազնիւ, ազգասէր, անձնուէր մարդ, պատուական Հայ, որ Ասորպատականի զժուարին ու վտանգաւոր առաջնորդութեան պաշտօնին մէջ բարոյական, մտաւորական ու վարչական մեծ յատկութիւններ ցոյց տուաւ, եւ օր չէ այն կղերական-պաշտօնողականը ինչպէս ոմանք կ'ըսեն, այլ «ազատամիտ պաշտօնողական» ի տիպարը՝ ինչպէս էր եւ Իզմիրլեան եւ ինչպէս պէտք է որ անհրաժեշտօրէն ըլլայ Ամինայն Հայոց Կաթողիկոսը:

Ա. 209Ա.ՆԵԱ.Ն

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՏԱՄՆԵՐԿՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Ա Մ Ո Վ Ս (*)

Ամովս եւ իր ժամանակը. — Խմբագրութեան
Թուականը. — Բովանդակութիւնը. — Երկու
լու իշխանութիւններ. — Ոճը:

Ամովս(1) Յուդայի երկրէն՝ Թեկուացի(2) էր, եւ եկած էր Իսրայելի հարըս-

(*) Շար. 30րդ Թիւին:

(1) Ոմանք ուզած են այս մարգարէին ու Եսայիի հօր Ամովսին (Ես. Ա. 1) միջեւ նոյնութիւն մը նշմարել, մանաւանդ մէկ կարգ մը կէտերուն մէջ Եսայիի ոճին հետ ալ սերտ նմանութիւններ ունին Ամովսի մարգարէութեան մէկ քանի մասերը: Եւ սակայն չէ կարելի ընդունիլ զայս, որովհետեւ ոչ միայն ժամանակագրական անհամաձայնութիւն մը կ'ըլլէ մեր առջեւ, այլ եւ նոյն իսկ երկու Ամովսներուն ուղղագրութիւնը տարբեր կը զրուի: Այսպէս մինչ Եսայիի հօր անունը ալիքով կ'սկսի ու ցաւեով կը վերջանայ: Ամովսինը ալիքով կ'սկսի ու սաւեւեով կ'աւարտի:

(2) Թեկուէ էր քաղաք Յուդայ, Բեթղեհէմի հարաւ-արեւելեան կողմը, Երուսաղէմէն 12 մղոն հեռու, կլորակ լեռան մը վրայ (Եր. 2. 1), նշանաւոր իր դաշտերովն ու հովիտներով: Հուսանական չի Փոլիսանոց կարծիքը, որոնք կ'ուզեն ընդունիլ մէկ Ամովս Իսրայելեան հարաւորեան կը վերաբերէր ծննդեամբ, եւ ապա վաճառելով (.) զոգած էր Յուդայի երկիրը իր կեանքին մնացորդ տարիներն անցընելու համար:

տութեան մեծամեծներուն ղէմ Նահվէի պատգամները հռչակելու: Ըսինք արդէն թէ իր մարգարէութիւնը, որ մեր ձեռքն հասած է, գրած պէտք է ըլլայ Յերոբոամ Բ.ի թագաւորութեան վերջին տարիները (790-785) ինչպէս իր բովանդակութիւնն ու առաջին համարին միջոցաւ տրուած կենսագրական ծանօթութիւններէն կ'երևի(1):

Հարկ է ստեղծել որ անոր բովանդակութեան(2) վրայ քիչ մը աւելի ծանրանանք, զի ոչ միայն Նահվէի վճիռները պատգամները պիտի տեսնենք անոր մէջ, այլեւ մարգարէին ժամանակին բովանդակեանքի հայելին:

Առաջին մասին մէջ, իրրեւ յառաջաբան կամ բնարան Յովէլէն փոխ առնուած ազգու հասուածէ մը ետքը, կը սկսի Նահվէի բարկութեան ու վրէժխնդրութեան վճիռները որոտալ չըջողայ ազգերու զլխուն: Անոնց անօրէնութիւններն ու ամբարշտութիւնը բարկացուցած են Տէրը, Իսրայելի կամ Յուդայի թշնամիները անոր նախանձը շարժած ու անոր վրէժխնդրութեան շանթերը հրաւիրած են իրենց վերայ: Այս թշնամի ազգերուն կամ ամբարիշտ ցեղերուն մէջ մուտ դաւած չին ոչ Եգիպտոսը, եւ ոչ Ասորեստանը, եւ ոչ ակնարկութիւններ կ'ըլլան Մարական կամ Հուսիական փաղանջներուն: Բնութեամբ

(1) Ինչպէս յայտնի է, Ամովս կը մարգարէանայ Հրէաստանի Ոգիւտ արքային ու Իսրայելի Յերոբ. Բ. թագաւորին օրով, Երկրաշարժէն 2 տարի առաջ (Ոգ. Ա. 1. հմտ. 2աք. ԺԴ. 5): Արդ, այս երկու թագաւորները միասնաբար թագաւորած են 803-784, որ կ'ըլլայ նաեւ Ամովսի գրութեան հաւանականագոյն թուականը: Երկրաշարժին ակնարկութեան օգուտ մը չկայ մեզի. ըստ Յովսեփոսի պատանոթ պիտի ըլլայ այն Ոգիւտի կամ Ազարիայի բաժանայական պաշտօն մատուցանելու յանդգնելուն ու բորտակելուն առիթով (765), բայց այս ասան շատոյ մեծած է արդէն Յերոբ. (781 կամ 3):

(2) Ամովսի մարգարէութիւնը կարելի է 4 մասերու բաժնել. Ա. Նահվէի պատգամները ընդգլխի հեռանոտ ազգայ, Յուդայի եւ Իսրայելի (Ա. 3: Բ. 16.): Բ. Նահվէի պատգամն ու վճիռները Իսրայելի 10 ցեղերուն ղէմ, (Դ. 1: 2. 15). Գ. Ամովսի տեսիլները Իսրայելի մասին (Լ. 1: Բ. 6.), Դ. Ազգայ բարօրի կեանքի մը աւետիսը (Թ. 7-15):

ռակն Եղովմն եւ Փղշտացին, Տիւրսն ու Մովարացին, Դամասկոսն ու Ամովրհացին կ'ենթարկուին Աստուծոյ արդար դատաստանին: Ետէն պիտի Երեւի ու պիտի դատէ այս բոլոր ազգերը: Գիտէ ան արդէն անոնց բոլոր արարքները՝ անարդարութիւնները, եւ առաջուընէ որոշած է անոնց ճակատագիրը:

Դամասկոս(1), որ Դադաաղի հրեայ բնակչութիւնը «Երկաթէ կամնասալերու» առկ ճգնած էր, պիտի կրէ իր արդար պատիժը, անոր թագաւորական պալատները, Աղայէլի, Բենադատի ապարանքները հրոյ ճարակ պիտի ըլլան, անոր պարիսպները պիտի խորտակին, Պաալպէքի՝ Հեղիպոլսոյ ու Եղեմայ բնակչութիւնը պիտի ջնջուի, ու Ասորի ժողովուրդը գերի պիտի տարուի հոն՝ ուրկից պաղթած էր:

Փղշտացիք(2), որ յարաճուն ասպատակութիւնով հարստահարած էին Յուդայի երկիրը, կողոպտած էին անոր արծաթ ու ոսկին ու անոր որդիները գերի տարած ու վաճառած էին Եղովմայեցիներուն, պիտի դանեն իրենց արդար պատիժը, Դադայի, Ասկաղանի ապարանքները հրոյ ճարակ պիտի ըլլան, Ազովատի ու Ակիւրոնի բնակիչները որով պիտի մեռնին, պիտի ջնջուին, ու Փղշտացիներու սերունդը պիտի պիտի կորսուի:

Տիւրս(3), որ, հակառակ Յուդայի իշխանական տան՝ Դաւթի թագաւորութեան հետ իր ունեցած եղբայրական դաշնակցութեան(4), դորձակցած էր Փղշտացիներուն ու Եղովմի սերունդին, Իսրայելի որդիները գերեզմարելու՝ վաճառելու դործին մէջ, իր պատիժը պիտի կրէ: Տիւրսի պալատներն ու պարիսպները հրոյ ճարակ պիտի ըլլան:

Այս պէս եւ Եղովմ(5) պիտի պատժուի, իր եղբայրը՝ Յակոբի սերունդը որով հաւածած ու անվերջ թշնամութիւն մը սընուցած ըլլալուն համար անոր զէմ, իր

քաղաքները՝ Ռիմանու, Բոսրան մոխիր կոյտեր պիտի ըլլան: Ամոնի(1) պարսպապատ քաղաքները պիտի աւերին, իր թագաւորն ու իշխանները գերի պիտի տարուին, որովհետեւ ասպատակած էին Յուդայի երկիրը, անդթօրէն բզբած էին Դադաաղի յղիններուն որովայնները — Մովարու(2) պալատները տիտի տարին, անոր իշխանները պիտի ջնջուին, որովհետեւ Եղովմի թագաւորին ոսկորները մոխիր դարձուցած էին:

Յուդան(3) ալ գերծ չպիտի մնայ Ետէլի բարկութենէն. Երուսաղէմի պալատներն ալ պիտի տարին, որովհետեւ Տէրոջը հրամաններուն բոլորովին ճշդութեամբ չէ որ կը հետեւի ան:

Մարգարէին սուր նետերը, սակայն, ամենէն աւելի կ'ուղղուին Իսրայելեան տանն ցեղերու հասցէին: Յայտնի է թէ անոր մարգարէութեան բուն նպատակը Սամարիան ու իր ժողովուրդներն են: Պժգանք կը զգայ անոնց պոռնկութեան վրայ մտածելով, զլուսնք՝ անոնց անարդար, շահախնդիր ու վատչաւէր կեանքին վրայ խօսելով: Արդարութեան զգացումը որոշ, շատ որոշ է Ամովսի մէջ(4): Աղքատին, զրկուածին, որբին ու այրին իրաւունքը կ'ուռնցնէ իր լանջքը: Զայրոյթ, համակ ցասում կը կտրի վաշտառուներու, մարդկային տղրուկներու դաշիր խորհուրդներն ու դործերը յիշելով:

Ամովսի Աստուածը, Ետէլէն, այնքան ստորին էակ մը, Աւոն մը կամ Եւթա մը, Բահաղ մը, Մելիք մը կամ Մոզոք մը չէ, ոչ ալ Աստարտէ մը, Ինտրա մը կամ Մարու մը, որ ամէն զոհաբերութիւն ու ամէն նուիրութիւն հաճոյքով ընդունի, հոգ չէ թէ անոնք յափշտակութեան ու զրկումի պատուի ըլլան(5): Կ'ատէ, կը մերժէ անոնց զոհերն ու տօները, երգերն ու պարերը(6): Ինչպէս նախկին դրիթէ բոլոր ցեղե-

(1) Ամովս. Ա. 3-5:

(2) Անդ. 6-8, Յովել Գ. 5-6

(3) Ամ. Ա. 9-10, Յովել Գ. 4-6

(4) Բ. Թագ. Ե. 11, Գ. Սագ. Ե. 1, Բ. 13

(5) Ամովս. Ա. 11, 12:

(1) Ամովս. Ա. 13-15

(2) » Բ. 1-3

(3) » Բ. 4, 5

(4) Ամովս. Բ. 6-8, Գ. 10, Գ. 1. Ե. 7, 11, 12 Ը. 4-6:

(5) » Բ. 8

(6) » Ե. 21-23

րու, նոյնպէս եւ Իսրայելի որդւոց մէջ արմատացած դադափար մըն էր թէ Աստուծոյ կամ աստուածներու բարեացակամութիւնը նուիրաբերութեամբ ու զոհերով միայն կարելի է ապահովել Միամիտ, ապուշ էր նախկին մարդկութիւնը: Կը կարծէր թէ Աստուածներն ալ մարդոց նման բան մը առնելով միայն կրնան բարեկամանալ: Արիան, Հնդկաստանի սարահարթներուն ու կանանչ մարմանդներուն վրայ, առանց խղճալու, իր թշնամի Տասիւներէն յափշտակած հարստութիւնէն բաժին կը հանէր «զօրաւոր» ու «ազնուական» (Ափսա) Ինտրային, Ագնիին ու Միթրային. «աւար, ոսկի, կով, կառքեր, հարստութիւն» կ'ուզէր Ինտրայէն, Տասիւնդներուն վրայ յաղթութիւն կը խնդրէր անկէ(1): Նախկին Դերման (germain) ու Յոյնը, Սկիւթացին, Հռովմայեցին, Փիւնիկեցին ու Աքքատեանը, չէին խղճահարկ իրենց աստուածներէն աւար ու փառք մուրալու, իրենց կողոպուտներուն տասանորդներովը անոնց տաճարները լեցնելու, ու յափշտակուած ոչխարներէն արջառներէն ու մարդերէն իսկ զոհեր՝ նուէրներ մատուցանելու անոնց: Այս մանուկ ըմբռնումի մակարդակէն բարձրանալու առաջին քայլն առին սեմական ժողովուրդներու ան «Տեսանողները», որոնց ծագումը անցիկի ստուերներուն մէջ ու անսպասելի վրաններուն տակ կը ծածկուի: Եւ հարկ է խոստովանիլ թէ ութերորդ դարուն (ն. թ.) Թիկուացի Տեսանողը դարձաւ զացումի ու կատարելութեան ստորին աստիճաններուն վրայ չէ որ կը տեսնենք:

Իրա՛ւ, չառ թերի է ան Եռայի մը, Յովհաննէսի մը, Ղուկասի մը բարձրութեան հետ բաղդատմամբ. Յիսուսի տիեզերական սիրոյ բարոյականին անձանօթ մըն է թուորովին, բայց ասով իր արժանիքը չի ջնջուիր: Ընդհակառակն հնութեան մէջ աստղ մըն է, տամուկ, խոնաւ թոհուրոհի մը խաւարին մէջ ծնած փոսփորային կայծ մը, պղպուտ մըն է, որ ազօտ

կերպով արշալոյսի բեկեւեկ շողերը կը յիշեցնէ:

Ամովս, իր քարոզած թերի բարոյականութիւն իսկ, չառ բարձր է իր ժամանակակիցներու ամբօխէն: Իսրայելի սաանցիկերը բոլորովին տարբեր ձգտում մը կը տեսնէին Ամովսի ու անոր հայրենակից նշանաւոր խորհողներուն մէջ: Սերտ կերպով փարած իրենց նախահայրերու կտակած կրօնական ըմբռնութիւններուն, մանուկ ու կոշտ արամաբանութեան, եւ միւս կողմէն անդիտակից զոհերը Փիւնիկեան, Քանաակեան կրօնային ըմբռնութիւններուն եւ ազդեցութեան, աւելի անկումի կը դիմէին քան բարձրացումի: Մինչ անդին Յուդայի երկիրը, զբեթէ առանձնացած, արտաքին հաղորդակցութիւններէ զերծ, իր մէջ նահապետական շրջաններէն մնացած դարգացումի կայծովը կը հրդեհուէր: Նոր դէմքեր, նոր միաբեր կը բուսնէին հոն: Եւ Եահվէի պաշտամունքը տակաւ կը թօթափէր իր վրայէն անցեալի կտապաշտական ժառանգութեան մը կեղեւանքը, երթալով աւելի կը պարզուէր. արդարութեան, իրաւունքի, ճշմարտութեան գաղափարները հետզհետէ տիրող տարրը կը դառնային անոր մէջ: Այս ուղղութեան մեծ շարժիչները Հրէաստանի մարգարէներն էին, մարգարէներու դպրոցները, բոլորովին անջատ քահանայական կազմակերպութիւնէն:

Ամովսի եւ Յովելի մարգարէութիւնները՝ մարգարէական այս դարգացող ձգտումին ուղիքին արտադրութիւնները չէին անշուշտ: Ամովսի մը կամ Յովելի մը քարձրութեան հասնելու համար շատ փուլերէ անցաւ ան: Եւ ահա այս յամր յառաջդիմութեան անաղմուկ դործիչները անհաշտ աչքով կը դիտուէին միշտ Եփրատեան հարստութեան ժողովուրդներէն: Անոնց աչքին մարգարէները նորազանդներ նորարարներ էին, մինչ Իսրայէլեան սաանցիկերը իբրեւ թէ պահպանողական ու ազգ. ինքնատիպ կրօնին հաւատարիմներն էին:

ԴԵՈՐԴ ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

(1) Rig-Véda I. 8, 1-8, I. 51, 5, 53, 4: VIII, 6, 9: 54, 10-12: 53, 1: IX, 32, 2-4 եւայլն:

«ԿԸ ՍԻՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Վասն զի կարծուածին չափ վասնդ մը չեմ տեսներ՝ նոյն իսկ կրօնի դէմ պայքար մղող կուսակցութիւններէ։ Աւելի օգտակար պիտի ըլլան անանք հաւատքի երկուայման մէջ ինքողներուն։ Աւաղի վրայ հիմնուածները պիտի վերահաստատուին անյողդողդ վէմերու վրայ։

Այսպիսի գոյութենէն մինչեւ հիմայ անթիւ, անհամար կուսակցութիւններ տարբեր գոյներով, տարբեր ընթացքներով՝ ծնած ու մեռած են, ոմանք իրենց սաղմին, ոմանք երկունքին մէջ. եւ ամէնէն շատ ապրողը դարուն չէ բոլորած, որովհետեւ «հիմն ի վերայ աւաղոյ» եղած է. ճշմարտութեան դէմ մեղանշած է, մարդկութեան ազնուացումին վտանգած է, փոխանակ իր գոյութիւնը պահպանելու համար օգտակար միջոցներու դիմելու, ըմբոստ ու բիրտ բախտախնդրութիւնովը սպաննած է զայն։

Այս առթիւ տպաւորիչ դաս մը կուտայ մեզի, առաքեալներու՝ քրիստոնէական կուսակցութեան դէմ, մոլեռանդ Հրեաներու օրէնսսուսը՝ Գամաղիէլ. «Զի թէ ի մարդիանէ իցէ խորհուրդդ այդ կամ դործ, քակտեսցի։» Գործք, Ե. 38.

Ինչո՞ւ վտանանք, ինչո՞ւ կասկածինք այն կուսակցութենէն զոր տիեզերքի Հեղինակը նուիրագործած եւ աշխարհ համօրէն ընդունած է 1900 տարիէ ի վեր։ Մենք, քրիստոնէական կուսակցութեան դործադիր մարմիններս, երբ խղճի մտքով, լոյս հաւատքով փարինք մեր Ս. կոչմանը, նուիրական պաշտօնին, «գրունք դըժոխոց զնա մի՛ յաղթահարեցին»։ Թո՛ղ չկեթոտին մեր ծունկեր, թո՛ղ չզաղրի մեր գրիչն ու լեզուն, ժամանակի պահանջի համկիստ պէտք է աշխատինք։

Ո՛վ Հայ Ս. Եկեղեցւոյ մշակ, մի՛ աշխատիր դրամի փոխան կատարել պաշտօնը, վարձկան ըլլալ մի՛ հետաքննող, Եկեղեցւոյ նուիրականութիւնը պաշտէ, առաքեալներու հետեւիր, քանի որ յաջորդն եւ անոնց։ Մի՛ փորձուիր ըսելու թէ՛ անոնք ընտանիք, զաւակ չունէին, զրամի պէտք չունէին, եւ այժմ ծանրաբեղունած եմ ընտանեկան հոգերով։

Այս՝, ճիշտ է այդ դանգաւոր, բայց կը հարցնեմ, ո՞վ Հայ քահանայ, ո՞ր է կուսակցութեանդ նիւթական ու բարոյական պէտքերուն համար, առաքեալներու սո՞վորոյթին համաձայն հրահանգելու ու հրահանգուելու կեդրոնը։ Տարին քանի՞ անգամ եւ ո՞ր տեղ կը դումարուի կուսակցութեանդ, նուիրական կուսակցութեանդ ոյժ տուող համախորհուրդ խըմբակցութիւնդ։ Ինքնագիտակ եւ պարտաճանաչ հովիւր իրաւունք ունի իր հօտին կաթը կթելու եւ բուրդը խուզելու, զի նուիրական է հօտը, նուիրական է հո՞վիւր, եւ նուիրական է վարձատրութիւնը։

Դիտեմ, պիտի առարկես թէ ուսումնական եւ պարտաճանաչ մարդիկ՝ քահանայական դասուն արդի լքեալ, լծացեալ զիրքէն եւ նիւթապէս ապրելակերպի տըղեղ սովորոյթներէն խրոչելով՝ կը խուսափին քահանայանալէ. եւ ընդհակառակն տպէս, անուս, ծոյլ, անճարակ, իմաստակ հաճոյակատարներ մուտ կը գտնեն ու կ'ընդունուին։ Միթէ յանցաւոր է ժողովուրդը երբ յուսահատօրէն՝ հանդիպածը կ'ընտրէ. յանցաւոր է միթէ ինքնագիտակ անհատը՝ երբ խոյս կուտայ։ Քանի որ անոնց թերութիւնները նշմարելով հանդերձ անտարբեր կը գտնուինք, իրաւունք պիտի ունենայ ժողովուրդը հանդիպածը ընտրելու. եւ իրաւունք պիտի ունենայ զարդացեալ անհատը միշտ այդպէս քննադատութիւններ ընելու եւ հետեւութիւններ հանելու, քանի որ մենք, մեր արդի քահանայական դասը՝ ներկայ լքեալ վիճակնիս բարւոքելու, աստիճաննիս բարձրացնելու միակ միջոցին վրայ չենք խորհրդածեր։ Դէթ քանի մը տարին անգամ մը, ճշմարիտ քրիստոնէական կուսակցութիւնով հաւաքական ժողով դումարել, պարտ ու պատշաճ անօրինութիւններ ընել ու բարձրագոյն պաշտօնէութեան ներկայացնելով դործադրութիւնը ինդրելու ձեռներէց ըլլալ կը պարտինք։ Ահա այն ատեն հասած պիտի ըլլանք Քրիստոնէական Ս. Կուսակցութեան վեհ նպատակին, ու քահանայութիւնը պիտի մնայ իր վսեմ բարձունքին վրայ։

ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀՆ. ՊՕՂԻԿԵԱՆ

Հալեպ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Պ.

Պամփիլիոս, պահ մը ընդհատուէլէ ետքը, սապէս շարունակեց.

— Մենք երբէք մեր քրիստոնէական համայնքին մէջ չենք խորհիր անձնապէս վայելել գեղեցկութիւնը: Մեր բոլոր ուժովը կ'աշխատինք խոյս տալ այն բոլոր բաներէն որ կրնան այս մասին փորձի ենթարկել մեզ, ինչպէս նաեւ այն բոլոր արուեստներէն եւ հրապոյրներէն որոնց պաշտումը ունին զրկելէ հեթանոսները: Մենք կ'աշխատինք ուսանիլ մարդկութիւնը սիրելու եւ յարգելու միջոցները: Կը փորձենք մշակել եւ տարածել այս զգացումը. մեր մէջ մերձաւորին սէրը բարձր կը մնայ գեղեցկութեան հրապոյրներէն: Սնիկա կը քննէ վէճի, անհամաձայնութեան բոլոր առիթները, որոնց ծագումը կը գտնուի սեռային յարաբերութեանց մէջ: Քրիստոնէական այն ատեն միայն կ'ամուսնանայ, երբ ունէ մէկուն չի վնասեր իր միութիւնն այն կնոջ հետ զոր կը սիրէ եւ որ նոյնքան ջերմապէս կը սիրէ զինքը: Մեր երէցը կ'աւելցնէ նոյն խիթ թէ ճշմարիտ քրիստոնէական պէտք չէ բնաւ սէր զգայ կնոջ մը համար, եթէ վստահ չէ թէ այդ կնոջ հետ իր ամուսնութիւնը չպիտի վշտացնէ ունէ մէկը:

— Բայց անհասկնալի է այդ, զոչեց Յուլիոս, մարդ կրնա՞յ իշխել իր հակամիտութիւններուն:

— Ձի կրնար, եթէ արդէն ազատ ապարէզ տուած է անոնց: Բայց իր կարողութեան սահմանին մէջ է խոյս տալ զանոնք արթնցնելէ կամ արդիւնէլ անոնց զարգանալը: Իբրեւ օրինակ ասէք քրոջ եւ եղբոր յարաբերութիւնները: Քոյր մը, որքան ալ գեղեցիկ ըլլայ, երբէք տարփանք չարթնցնիր եղբորը սրտին մէջ: Ատիկա պիտի կրնար պատահիլ ռակայն, եթէ երիտասարդն ստուգէր թէ ան զոր իր քոյրը կը կարծէր, արեւնի կոսկրով կ'ապուած

չէ իրեն: Բայց այդ պարագային ալ այս զգացումները շատ տկար են եւ զիւրաւ կը զսպուին, երբ մարդ պզտիկ ճիգ մը ընէ զանոնք կատարելապէս զսպելու: Եղբայրական համակրութեան զգացումը որ դոյութիւն ունէր սկիզբէն, պիտի չեզոքացնէ աւելի վերջը երեւան ելած տարփական զգացումները: Ինչո՞ւ տարակուսիլ թէ կարելի եւ նոյն խիթ զիւրին պիտի ըլլայ այս մարդուն՝ բոլոր կիներուն համար տածել յար եւ նման զգացումներ զոր կ'ունենան իրենց քոյրերուն նկատմամբ, եւ այնպէս մը ընել որ ամուսնական սիրոյ զգացումը բարգաւաճի այս ուղղութեամբ: Երիտասարդ մը չի համարձակիր տարփանք զգալ այն աղջկան նկատմամբ զոր իր քոյրը կը նկատէ, մինչեւ որ վըստահ ըլլայ թէ քոյրը չէ: Ճիշտ այսպէս ալ Քրիստոնէայ մը չի յօժարիր նմանօրինակ զգացում մը մշակել ունէ կնոջ մը նկատմամբ, մինչեւ որ վստահ չըլլայ թէ անոր նկատմամբ զգացած համակրութիւնը չպիտի տառապեցնէ ունէ մէկը:

— Բայց ի՞նչ պիտի ըլլայ եթէ երկու այրեր միեւնոյն կիներ սիրեն:

— Անոնցմէ մէկը իր զգացումները կը զոհէ միւսին երջանկութեան համար:

— Միւս կողմէ կենթադրենք թէ աղջիկն ալ անոնցմէ մէկը կը սիրէ:

— Այդ պարագային, այն զոր աղջիկը նուազ կը սիրէ, պարտաւոր է իր սէրը զոհել աղջկան երջանկութեան համար:

— Բայց եթէ աղջիկը երկուքն ալ սիրէ, եւ երկուքն ալ բաղձանքն ունենան իրենց սէրը զոհելու, անոնցմէ ո՞չ մէկուն հետ պիտի ամուսնանայ:

— Այդ պարագային, երէցները խնամով պիտի ուսումնասիրեն այդ խղճահարութիւնը, եւ երկու կողմերուն ալ խորհուրդ պիտի տան այնպիսի որոշումներու յանդիլ, որոնք պիտի կարենան իւրաքանչիւրին ընծայել հնար եղածին չափ աւելի երջանկութիւն:

— Բայց ընդհանրապէս իրերն այդպէս տեղի չեն ունենար, որովհետեւ մարդկային բնութեան հակառակ է այդ:

— Մարդկային բնութիւնը: — Մարդ-

(1) Շար. 22րդ Թիւէն սկսեալ:

կային ո՞ր բնութիւնը : Մարդ որքան ալ անասուն մը ըլլայ , կը կարծեմ թէ նոյնքան ալ մարդ մ'է : Եւ եթէ այն յարաբերութիւնները զորս քրիստոնէական կըրօնը կը պարտադրէ ունենալ կնոջ հետ , չեն համաձայնիր մարդուն անասնական բնութեան , գոնէ կատարելապէս կը համաձայնին մարդուն մէջ գտնուած ողջմտութեան : Երբ մարդ իր բանականութիւնը ամենախոնարհ գերին կ'ընէ իր անասնական կիրքերուն , գաղաններուն աստիճանը կ'իջեցնէ ինքզինքը : Այն ատեն մարդ այն աստիճան բռնական եւ ազգայինդ աստիճանի մը կ'իջնէ որուն չի հետեւիր ոեւէ անասուն : Բայց եթէ մարդ իր բանականութեան ձիւքերը գործածէ կատարելու իր տարփական բնազդները , երբ այս վերջինները ծառաներն ըլլան առաջիններուն , այն ատեն հասած է երջանկութեան որ կրնայ գոհացնել իր հոգիին ամենէն թաքուն եւ ամենէն բարձր ձգտումները :

Ե.

— Ի՞նչ մըն ալ քու վրայ խօսինք , ըսաւ Յուլիոս : Ինչի ընկերակից տեսայ հիսնալի գեղեցկութեամբ օժտուած աղջիկ մը , եւ եթէ երեւոյթներէն դատենք , ձեր քաղաքին մէջ միասին կը բնակիք : Անկեղծօրէն պատասխանէ ինձ , չե՞ս բաղձար հետն ամուսնանալ :

— Երբէք ատոր վրայ լրջօրէն չեմ խորհած , պատասխանեց Պամփիլիոս : Աղջիկն է քրիստոնեայ խեղճ այրի կնոջ մը , որուն կ'ընծայեմ իմ կարողութեանս սահմանին մէջ դառնուած ամէն ծառայութիւն , ինչպէս կ'ընեն ուրիշներ ալ : Անձնուէր եմ թէ՛ մօրն եւ թէ՛ աղջկանը , եւ երկուքն ալ կը սիրեմ հաւասարապէս : Կը խոստովանիմ որ մասնաւոր համակրութիւն մը ունիմ Մատէնի նկատմամբ , եւ մտածեցի հետն ամուսնանալ , բայց հարկ է որ քեզ ըսեմ թէ խոչընդոտ մը արգելք եղաւ ցարդ ինձի՝ գործադրելու իմ որոշումըս : Իմ ծանօթներէս երկուսորդ մըն ալ կը սիրէ Մատէնը : Երկուսորդ է ան ալ , եւ զինքը կը սիրէ խանդակաթ կերպով , ուստի երբէք չպիտի կրնամ հանդուր-

մել վիշտ պատճառելու իրեն՝ ամէն յոյս վերցնելով իրմէ : Հետեւապէս մաքէս կը հեռացնեմ ամուսնութեան այս դաղափարը : Իմ բոլոր ձիգերս դէպի միակ նպատակ մը կը ձգտին , այն է իմ նմանութեամբ սէրը , եւ անձնութեան զոր անոնց կը պարտիմ : Թերեւս ապագային ամուսնանամ , երբ լաւ մը համադրեմ թէ ասիկա ոեւէ վիշտ չպիտի պատճառէ ոչ մէկուն :

— Ատիկա իրերը գիտելու քո՛ւ եղանակ է , բայց աղջկան մայրը թերեւս ուրիշ եղանակ մը ունի : Ապահովաբար իրեն համար մեծ կարեւորութիւն ունի հաճոյակատար եւ աշխատասէր փեսայ մը , թէ ծոյլ եւ մոյլ փեսայ մը ունենալու խնդիրը : Եւ որովհետեւ քեզ շատ լաւ կը ճանչնայ , տարակոյս չկայ թէ երջանիկ պիտի ըլլայ իր զաւակը քեզի տալով :

— Այդպէս չէ խնդիրը , անիկա շատ լաւ գիտէ թէ բոլոր իմ եղբայրներս ալ նոյնքան անձնուէր եւ պատրաստ են իրեն ծառայելու : գիտէ թէ պիտի չարուանակեմ միշտ իրեն համար կրցածս ընել , ինչ որ ալ պատահի : Եթէ իր աղջկան հետ ամուսնանամ , խիստ երջանիկ պիտի ըլլամ : Բայց նոյնքան հաճոյքով պիտի տեսնեմ անոր ամուսնութիւնը ուրիշի՞մ հետ :

— Ո՛չ , ո՛չ , այդ աստիճան անձնութեան չի կրնար անկեղծ ըլլալ : Ահաւասիկ ճիշտ ատոր մէջ կը կայանայ Գրիստոնեաներուն ամենամեծ սխալը , Դուք թէ՛ ինքզինքնիդ կը խաբէք եւ թէ ուրիշները , Բայաբձակապէս ճիշտ են օտարականին խօսքերը , զորս յիշեցի քանի մը վայրկեան առաջ : Պահ մը առաջ ակամայ գրաւուած էի քու հրապուրիչ պերճախօսութենէդ եւ խանդավառ նկարագրութենէդ : Հիմա՝ պաղարեամբ խորհելով՝ կը տեսնեմ թէ այդ ամէնքը յուսախաբութեանց միայն կրնան տանիլ եւ զմեզ վայրենի եւ բարբարոս կեանքի մը առաջնորդել :

— Ո՛ւր կը տեսնես այդ վայրենիութիւնը :

— Սա կէտին մէջ որ դուք միայն ձեր ապրուստը չահելու համար աշխատելով ,

արուեստից եւ գիտութեանց նուիրուելու ո՛չ ճաշակն ունիք եւ ոչ փափաքը : Օրինակի համար, դուն ցնցողիներ հագած ես, ձեռքերդ բրտացած, ոտքերդ կարծրացած, մինչ ընկերուհիդ ալ, որ գեղեցկութեան զիցուհի մը կը նմանի, հազիւ թէ ազատագրուած դերուհի մը երեւոյթն ունի : Գուր, Քըխտոնեաներդ, ոչ Ապոլոնի Օրհներդ մը ունիք, ո՛չ տաճարներ, ոչ ալ բանաստեղծութիւն կամ մրցախաղեր : Մէկ խօսքով, աստուածներուն մարդոց պարզեւած ձիւքերէն ո՛չ մէկը չի դարձուար թաղեցելու ձեր կեանքը կամ աւելցնելու անոր հրապոյրները : Աշխատիլ, յոգնիլ, ջախջախուիլ տարտալաման աշխատանքի տակ՝ դերի մը կամ անասունի մը պէս, միմիայն պահպանելու համար ձեր գոյութիւնը, հազիւ թէ ամենէն կոշտ սընունդը հայթայթելով. ասիկա կամաւոր բայց անարդար հրաժարում մը չէ՞ որուն կ'ենթարկուին մարդկային բնութիւնն եւ ձգտումները :

— Նորէն եկանք մարդկային բնութիւն կոչուած այս անհանգուրժելի բանին վրայ, զոչեց Պամփիլիոս կնիդրում, ըսէ՛ք, թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ մարդկային բնութիւնը : Գերիները չարչարելու մէջ իրենց ուժէն վեր աշխատութիւններով, մեր եղբայրները ջարդելու եւ զանոնք գերութեան զատապարտելու մէջ, եւ կամ թէ կինը հաճոյքի անարկա՞յ մը դարձնելու մէջ : Այդ ամէնն անհրաժեշտ են, հասնելու համար ա՛յն գեղեցկութեան եւ այն կեանքին զոր միակ արժանաւոր բանը կը նկատէք մարդկային բնութեան : Կեանքի եւ մարդկային բնութեան հիմը ատո՞ր մէջ է սակայն, եւ ընդհակառակն չի՞ գտնուիր եղբայրական եւ սիրեղբրական սիրոյ մէջ : Միւս կողմէ մեծապէս կը սխալիք, եթէ կ'երեւակայէք թէ մենք կը մերժենք արուեստներն եւ գիտութիւնը : Մենք ջերմապէս կը զնահատենք մարդկային արարածներու ձիւքերն եւ տաղանդները : Մենք մարդուն բնածին կարողութիւնները միջոցներ կը նկատենք, որոնք հա՛թայթուած են անոր օղնելու որ հասնի իր նպատակին, եւ այդ նպատակն

է Աստուծոյ կամքին կատարումը : Մենք արուեստներն եւ գիտութիւնը գոհիկ ժամանց մը չենք նկատեր, որոնք ան առաւելն վաղանցիկ հաճոյքներ կ'ընձեռեն ծոյլերուն : Մենք զանոնք կը նկատենք լուրջ զբաղումներ որոնք կը պահանջեն մարդկային բոլոր կարողութեանց կիրառումը : Մենք ճշմարիտ գիտութիւն կը նկատենք, ինչ որ կրնայ նպաստել մեր կեանքը բարեփոխելու. եւ արուեստներուն այնքան միայն արժէք կուտանք, որքան անոնք կը ծառայեն մարքելու մեր մտածումները, բարձրացնելու մեր հոգին, եւ աւելցնելու սիրոյ եւ աշխատութեան կեանքի մը վրայ հիմնուած գոյութեան մը անհրաժեշտ ուժերը :

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՅՄԱՆ զէպքերը, երկրին զանազան կողմերը, այնքան բազմացան որ հայ ժողովրդեան կրօնային զգացումները կարեւոր խոցւած են : Ծանօթ է Բաբերդի Քսանդա գիւղին զէպքը : Առաջնորդարանին գրաւոր բողոքին վրայ, Գայմաղամը՝ բաղմաթիւ ոստիկաններով եւ Խտարէի ժողովին Յոյն եւ Հայ անդամին հետ մէկտեղ դացեր է Քսանդա, եւ իսլամական դրօշը վար առնել տալով ու եկեղեցին բանալով Քրիստոնէական արարողութիւն կատարել տուեր է իր ներկայութեանը : Բայց միւս կողմէ առեւանդուած հարսը նիխան ըրած են առեւանդողին հետ : Հետեւապէս գիւղացիք վրդովուած, յուսահատ կը մնան միշտ : «Քանի որ — կ'ըսեն Կարնոյ կուսակալութեան ուղղուած զրի մը մէջ — մեր կիներն այսուհետեւ ազատ համարձակ դաշտ չպիտի կարենան երթալ եւ աշխատիլ, եւ ամէն ժամ վտանգի տակ են, քանի որ Քրիստոնեաներու պատկոյն օրէնքին առջեւ անընդունելի է, եւ մեր ընտանեկան պատիւն սուրբ տակ կ'երթայ :

մենք, ամբողջ գիւղի բնակչութիւնը, մեր պատուոյն, կիներուն եւ պատիւի իրաւունքին տեղը չըլլալու, եւ ամեն յարձակումէ ու բռնութենէ զերծ մնալու համար, միա-համուռ կը յայտենեմք թէ իսլամութիւնն ընդունելու հարկին տակ կը զտնուիմք : Ուստի կը խնդրենք որ հարկ եղած դործողութիւնները կատարուին, եւ իսլամացած կիներն ալ իսլամութիւնն ընդունած զիւրը զրկուի եւ իր ամուսնոյն յանձնուի : Միւս կողմէ տեղւոյն քահանաներն այս ամենադառն պարագան իմացնելով եւ իսլամանալու ուղղով ժողովրդեան կողմէ՝ կա՛մ իրենց (քահանաներուն) ալ իսլամանալու եւ կա՛մ զիւրէն հեռանալու ազգաբարձու ըլլալը տեղեկագրելով, դարման եւ հրահանգ կը խնդրեն թէ ո՛ւր պէտք է փոխադրուին եւ ի՛նչ կարգադրութիւն պէտք է ընեն Ս. Եկեղեցւոյ եւ անոթներուն եւն. մասին : Յուսահատական կացութիւն մը վերջապէս, որմէ աւելին կարելի չէ երեւակայել :

Եւ այդ դէպքը միակը չէ դժբաղդաբար Տիգրանակերտի առաջնորդ Տ. Զաւէն Եպիսկ. որ ճամբորդութեամբ Խարբերդ գացած էր, բռնաբարման եւ բռնի իսլամացման երկու դէպքեր կը ծանուցանէ Պատրիարքարան, առաջինը՝ Մալաթիացի 19-ամեայ Աննա Քիւրճանեան, եւ երկրորդը Բէրչնճ գիւղը գտնուող 14 տարեկան Թադուհի անունով աղջկան մը վրայ : Հակառակ Ն. Սրբազնութեան ազդու ջանքերուն, խնդիրը վերջնական յաջող ելքի մը չի յանդիւր, այնպէս որ Տ. Զաւէն Եպիսկ. կը հարկադրուի գրել. «14 տարեկան ի վեր առաջնորդական պաշտօն կը վարեմ դաւառի մէջ, եւ այսպէս վարմունք չէի տեսած նոյն իսկ Համիտի օրով :»

Պիւնեանը Համիտի մէջ ալ (Սերաստիա) վեհանոյշ անուն աղջիկ մը բռնի իսլամացնելու եւ թուրքի մը հետ նիսեան ընելու գործի, այն գերազանց պատճառով որ աղջիկն իր օրօրոյցին մէջ պիշիկ փերսիկ եղած էր նոյն թուրքին հետ (° °)

Եւ ինչո՞ւ հեռուները երթալ : Պոլսոյ մէջ իսկ պատահած դէպքերուն վրայ նոր մը կ'աւելնայ շարժում : Գաւառ վաշտցի

թուրք մը Բերսէն հայ աղջիկ մը խաբելով իր բնակարանը տուրած եւ հոն տորճանակի եւ սուրի սպանակիքով աղջիկը հարկադրած է իսլամանալ եւ զիր մ'ալ ստորագրել տուած է : Աղջկան մայրը բողոքած է Պատրիարքարան :

Ուրեմն, Թալան, Եպիսկ. Խարբերդ, Խարաբութիւն, Կողային յափշտակութիւն, բռնի իսլամացում, ահա՛ թէ ի՛նչ է թրքաբանայուն վիճակը, Օսմ. Սահմանադրութեան հռչակման չորրորդ տարւոյն մէջ :

ԵՐԿՈՒ ՀՐԱՍՏԱՆԿԱՆՆԵՐ. — Մշոյ առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկ. Խարաբանեան՝ յուսահատելով ինքզինքնին «գիւղօր» անուանող կարգ մը մարդոց՝ առաջնորդարանին եւ Գաւառ. Վարչութեան դէմ հանած դժուարութիւններէն եւ բացած պայքարէն, կրկնել է Պատրիարքարան ուղղած իր պատճառաբանեալ հրաժարականը : Վստահ ենք թէ կեդր. Խառն Ժողովը պիտի փութայ մերժել այս հրաժարականը, միեւնոյն ատեն ազգային օրինաւոր մարմիններէն դուրս գործող անձներու խափանարար ընթացքը կասեցնելու անհրաժեշտ եւ ստիպողական միջոցներն ի գործ դնելով անշուշտ :

Նմանօրինակ հրաժարական մը զրկած է Երզնկայի առաջնորդ Տ. Երուանդ Մ. Վ., տիրող անիշխանական վիճակին մէջ անկարելի դատելով իր պաշտօնավարութիւնը :

Երզնկայի մէջ այժմ ոչ Գաւառ. Վարչութիւն կայ եւ ոչ ալ Գաւառ. Ժողով : Ամէն բան երեսի վրայ մնացած է :

Այս ներքին երկպառակութիւններն այնքան աւելի ծանր կը կշռեն, որքան դժնդակ եւ տաղանապալի շրջան մը կ'անցընէ ազգը, իր դրացի ազգերուն կողմէ հալածանքի սուր վտանգին տակ :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ մէջ Հայոց կրած տառապանքներուն վերջ տալու համար, Ատրպատականի առաջնորդին դիմումին վերայ՝ էջմիածնի կաթող. տեղապահ Սուրէնեան Արքեպ. դիմած է թէ՛ ողբ կառաւարտութեան եւ թէ՛ Պարսկաստանի խնամակալին : Այս վերջինը իր անկեղծ բարեացակամութիւնը հաւաստած, եւ յայ-

տարարած է թէ խաղաղութեան վերահաստատման եւ յանցաւորներու պատժութեան համար նշանակուած է իւր տրուած են : Տեղապահը հրամայած է նաեւ Թիֆլիսի փոխ-առաջնորդ Նիքիմ. Եպիսկոպոսին եւ Պաքուի գործակալ Տ. Նզիշէքէ. Գեղամեանցի՝ հանգանակութիւն կատարել ի նպատակ Ստրպատականի Հայոց : Այս առթիւ Մայր Աթոռը նուիրած է 200 ռուբլի :

ԱՄԵՐԻԿԱՆԱՅԵՐԸ ԵՒ Տ. ՄՈՒՇԵՂԵՊԻՍԿ. — Կրօն. Ժողովը անցեալ շաբաթու յետ ընթերցման հաւան Ժողովին զորակեց էջմիածնի Կաթող. Տեղակալին մէկ պաշտօնագիրը, որով կը յայտարարուի թէ Տ. Մուշեղ եպս. ներկայ հանգամանքներուն մէջ յԱմերիկա ոչ իբր Սաւաշնորդ եւ ոչ իբր Տեղապահ ո եւ է պաշտօն չի կրնար վարել : Միւս կողմէ Ամերիկահայոց Երեսփ. Ժողովի զիւանին ստորագրութեամբ բնորոշակ գիր մը ուղղուած է Պատր. Տեղապահ Ա.ին, որով կը պարզուի Տ. Մուշեղ Ա.ի օգտակար գործունէութիւնը՝ իրենց մայրենի եկեղեցիէն ունեցած Ամերիկահայերու ազգասիրական եւ եկեղեցասիրական զգացումներն արծարծելու մէջ, կը բացատրուի մանրամասնօրէն թէ ի՞նչ պարագաներու տակ Ն.Արքադուքիւն Ամերիկահայոց առաջնորդը ընտրուած է եւ կ'եզրակացուի թէ ան կը մնայ իբրեւ այդ ի վաւերացումն Ամենայն Հայոց ընտրելի Հայրապետին, եւ մինչեւ այդ առեւն առայժմ Առաջն. տեղապահի պաշտօնը յանձնուած է իրեն, եւ միեւնոյն ժամանակ պիտի վարէ Պոսդոնի թեմին բարոզական պաշտօնը : Այդ գրին մէջ կ'աւելցուի թէ Ամերիկահայ գաղութին ջախջախիչ մեծամասնութիւնը սիրած է Տ. Մուշեղ Ա.ը, որ այս միջոցին գլուխ կանգնած է Պոսդոնի մէջ հայկական ոճով եկեղեցի մը կառուցանելու գործին, որուն համար միայն երկու օր պատելով 3000 տոլարի գումար մը հանդանակած է :

ԱՄԵՐԻԿԱՆԱՅԵՐԸ ԹԵՐԹԻԿԸ կը գրին թէ 4-5000 Հայ գաղթականներ Բրիտանական Քոլումբիոյ մէջ հաստատուելու համար ծրագրել մը պատրաստուած է : Այս նպատակաւ գիտում եղած է նաեւ ամերիկեան կառավարութեան : Դադթականները նաեւ պիտի նստին Բոս Սախի առջեւ :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆԻ Բ. Դուռ այլ եւ այլ որոշեց՝ գիտում ընել Բ. Դուռ այլ եւ այլ կողմերէ եկած զինուորական խնդիրներու քսանիկը սիննի գործողութիւններու համար — Հրաժարեցնել Կիւ միւշխանէի Սուրբ

Փրկիչ վանքին հոգաբարձութիւնը, անոնց արտօնութեան ծախած ըլլալուն համար վանքին թանկագին գոյքերը. դատական եղանակով ալ պիտի պահանջուի գոյքերու արժէքին մնացած մասը : — Ժողովը որոշեց քաղցիրով մը խնդրել Բ. Դուռն, սրագէս զի կոյթը կուտած զինուորները՝ որ կուտակալին հրամանին հակառակ ոկած են մեկնել հոնկէ, մնան այն կողմերը, անգործութիւնը պահպանելու համար :

ՎԱՆԵՆ ՊԵՐՈՍ ԷՓ. Գալմամահեան կը հեռագրէ թէ Վանեցիք սիրով յանձն առած են Հ. Բ. Ը. Միութեան առաջարկը՝ Հայկազնեան վարժարանէն անջատ չէնք մը այս տարուան վարձքին եւ դալ տարի ալ յատուկ չէնք մը չինելու ծախքի վճարումը : հետեւապէս ծրագրեալ վարժապետանոցը պիտի կրնայ բացուիլ Վանայ մէջ, առանց գործ ունենալու տեղական ազգային Մարմնոց հետ : Այդ մարմնոց վերջին կազմութեան ապօրէն ըլլալուն մասին ալ բողոքներ կը տեղան նոյն քաղաքէն, կը սպասուի Սարահեան Ա.ի տեղեկութեանց՝ այդ Մարմնոց կազմութեան եւ Աղթամարի խնդրոյն վրայ :

ԽԱՐԲԵՐԴԻՆ կը գրեն մեզ թէ թեմական գործերը կարգի մտնելու վրայ են : Ինչպէս յայտնի է, առաջնորդ ընտրուեցաւ Բզի եռանդուն առաջնորդը Տ. Պապ Ծ. Վ. : Կրօն. Ժողովը ալ կազմուած է հետեւեալ կերպով. — Տ. Տ. Վարդան քնն. Ասլանեան, Գարեգին քնն. Վարդանեան, Ղեւոնդ քնն. Տ. Ստեփանեան, Աստուր քնն. Յուսիկեան եւ Պօղոս քնն. Պետրոսեան :

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ միաբանութիւնը բողոքի հեռագիր ուղղած է ՎԵՆ. Կայսեր եւ կառավարութեան, յայտնելով որ դարեւ ի վեր օռն. երկրին համար աղօթող այս միաբանութիւնը կը բողոքէ Եէտի Դուռէի դուրսը դանուող երուսաղէմապետական ագարակին դատական եղանակով մահղիւլ նկատուելով իւրացուցման գէժ, եւ արդարութեան գործադրութիւնը կը պահանջէ :

Արտօմատէր ՀԱՄՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՐՈՒՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵՋԻԲԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՂՋԳԱՆՅ ԳՈՒԼԷՃ, ՍԿԻՒՏԱՐ

Ամերիկեան աղջկանց Գոլէճը կը բացուի Սեպտ. 14ին: Այս Գոլէճը Թուրքիոյ մէջ միակ հաստատութիւնն է որ կանանց բարձրագոյն կրթութիւն կուտայ: Այս վարժարանին մէջ կ'աւանդուին՝ Գիտութիւնք, Պատմութիւն, Ուսողութիւն, Գրականութիւն, Մանկավարժութիւն, Փիլիսոփայութիւն եւ Լեզուներ:

Գոլէճը չորս տարուան դասընթացք մը ունի: Անդղիերէն չգիտցողներուն դիւրութեան համար մասնաւոր դասարան մը բացուած է այդ լեզուին ուսուցման համար: Սկիւտար Օր. Տայեանի, Ատափազարի աշուհեաց վարժարանի եւ ուրիշ համահաւասար հաստատութեանց չըջանաւարտները Գոլէճի առաջին կարգը կ'ընդունուին առանց քննութեան:

Գոլէճի Նախապատրաստական Բաժինը կը զսնուի Առնաւուտգիւղ: Կ'ընդունուին միայն այն աշակերտուհիները որոնք տասը տարեկանէն վեր են:

Գիշերօթիկները պէտք է օր առաջ դիմեն եւ 2 ոսկի աւանդ ձգելով ապահովեն մուտքը առաջիկայ տարուան համար:

Դիմել Տնօրէնութեան Առնաւուտգիւղ ամէն երեքշաբթի օրերը, առտուան ժամը 10—12:

4—5

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԺԻՐԱՅՐ.— Յեղափոխական առաջնալին կենսագրութիւնը (1881-1884): Տ. Դեորգ Մ. Վ. Ասլանեան, Ռոտտսթոյի եւ աւանդուն առաջնորդը, իր նկարուն եւ զգայուն ոճով պատկերացուցած է կեանքը յեղափոխական առաքելին, իր ամէն կողմերով, մանկութենէն սկսեալ: Դործը զարդարուած է բազմաթիւ պատկերներով, որոնք կը ներկայացնեն Ժիրայրը, իր ընտանեկան պարագաները, Մուրատը, իր ուսուցիչները, քաղաքներն ուր ծնած, ապրած ու գործած է, եւն: Երկրորդ հատորով մը հեղինակը առաջագրած է նկա-

րագրել Ժիրայրի գործունէութիւնը՝ Երզնկայի, Կիլիկիոյ, Կեսարիոյ եւ Անկիւրիոյ եւն. մէջ, մինչեւ իր կախաղան բարձրանալը: Հրատր. Գըլճճեան գրատան: Գին 6 ու կէս զրշ:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

(ԵՕԹՆԱՄԵՍԱԵ ԻՏԱՏԻ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ, ՍԿԻՒՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԽԵՐԱՑՈՒԱԾ ՄԵԱՐԻՖԵՆ

Հաստատութիւններս, որոնց արդիւնքները գնահատուեցան մեծապէս, եւ որոնց վկայականները վաւերացուեցան օրն օրին կրթական նախարարութենէն, ամէնէն մեծ երաշխիքն են թէ իրենց նպատակին կը ծառային լիովին, թէ կը սորվեցնեն բացի Հայերէնէ, Օսմաներէն, Պրանսերէն, Անգլիերէն եւ Գերմաներէն լեզուները, եւ գիտական եւ իմաստասիրական ուսումները, տալով հայկական ընտիր դաստիարակութիւն մը երկսեռ Հայ պատանիներու, պատրաստելով զանոնք ամէն ասպարէզի եւ համալսարանական ուսման, ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մասնագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի բացուի համալսարանական դասարան մը, մանկավարժական, գիտական, առեւտրական եւ լեզուական ճիւղերու: Քսան թիւը բաւական պիտի սեպուի բանալու համար առաջին դասարանը: Վերաբացումը 1 Սեպտ. Եշ. դասերը պիտի սկսին 5 սեպտեմբեր, Բշ:

Աշակերտաց ընդունելութեան համար դիմել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնութեան, աղջկանց վարժարանը, առաւօտէն մինչեւ իրիկուն, ու Գշ. եւ Եշ. օրերը ժամը (Ը. Թ.) 10էն վերջ Սիւմպլիլի իւն, Հիմնադիր-Տնօրէնին դասագիրքերուն եւ բառարաններուն կեդրոնատեղին:

Հիմնադիր-Տնօրէն
5—5 ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ
ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՈՑ

Լոյս տեսաւ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ հրատարակութեամբն եւ «Մասքէոսեան» տպագրութեամբ՝

ԲՐՈՅ. ՅՈՎՀ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Դին՝ 5 դահեկան արժաք: Վաճառասեղին Է՝ Միացեալ Ընկերութեանց գրասենեակը, Պոլիս, Պահէէ Գափու, Եստրաքիէ խան, թիւ 23 եւ 27:

Ծանօթ. — Հրապարակ ելած մէն մի օրինակ ընկերութեան կնիքէ պէտք է կրէ անպատճառ:

Հրատարակութիւն Ա. ԵԱԶԸՃԱՆ գրատան

ԱՐԵԱԼՈՅՍ ԱՐԱՊԵԱՆ

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ ՅՐԱՆՍ. ԼԵԶՈՒԻ

Ա. ԳԻՐԲ

Մանկավարժական նորագոյն մեթոտով եւ խնամով պատրաստուած Ոսկեմատենիկներու շարք մը, որուն նպատակն է Հայ ուսանողութիւնն օտար լեզուի ընթերցանութիւնը սորվելու վայրկեանէն իսկ հետզհետէ խօսելու ընտելացնել զէմ՝ յանդիմանական ուսուցմամբ:

Դին ներկայ Ա. գիրքին 3 զրշ. Մամլոյ աակ են Բ. եւ Գ. գիրքերը: Զերմապէս կը յանձնարարուի Ազգ. վարժարաններուն:

Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ԱՐԱԳԱԾ, հրատարակուեցաւ Զրդ թիւ ճօխ եւ օգտակար պարունակութեամբ: Փնտռեցէք ամէն կողմ. գին 40 փարա:

ՈՒՍՈՒՄԵԱՐԱՆ, Ամսաթերթ, մանկավարժական-դպրոցական բովանդակութեամբ: Տարեկան բաժնեգին 12 զրշ., 4 ֆր. Պատասխանատու-տնօրէն, ԱնՅ. Գրշ. լանկըճեան, հասցէ՝ Բանկալթի, Պէքճի փողոց թիւ 1:

ԲԺԻՇԿ, ամսաթերթ, բժշկական եւ առողջապահական օգտակար պարունակութեամբ, եւ աշխատակցութեամբ ծանօթ բժիշկներու: Տէր եւ տնօրէն Տըք. Վահան Ղազարեան, Տրապիզոն: Հրատարակուեցաւ վեցերորդ թիւը:

Գ Է Ո Ր Գ Մ Ե Ս Ր Ո Պ

Ո Ւ Ր Ա Ր Տ Ո Ւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ամեն կողմէ գնահատուած)

Փուլթացէք գնել որովհետեւ կէսէն աւելին սպառած է արդէն: — 254 էջ, 30 պատկեր, մէկ քարտէս, են: Գին 10 զշ., 2 ու կէս ֆր. 1 բուբի, կամ կէս տօլար: 5 է աւելի գնողներուն գոհացուցիչ գեղջ: — Դիմել հեղինակին՝ Ատաբազար, և Պոլիս՝ բոլոր գրավաճառներուն: 6—3

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համալ Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ ՊՈԼԻՍ